ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՈՒՆԻՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Աշխարհագրական գիտելիքների միասնացման արդյունքում զարգանում է.**

1) հասարակական աշխարհագրությունը
2) օդերևութաբանությունը
3) ֆիզիկական աշխարհագրությունը
4) քարտեզագրությունը

2 **Հորիզոնի ո՞ր կողմի ազիմուտն է 270°:**

1) արևմտյան
2) հյուսիսային
3) արևելյան
4) հարավային

3 **Միջին մասշտաբի քարտեզներ են.**

1) 1:1000 000 — 1:5000 000
2) 1:500 000 — 1:10 000 000
3) 1:10 000 — 1:200 000
4) 1:200 000 — 1:1000 000

4 **Խոշորամասշտաբ այն գծապատկերները, որոնք չունեն աստիճանացանց, կոչվում են.**

1) ուրվագծային քարտեզներ
2) հատակագիծ
3) աշխարհի քարտեզներ
4) քարտեզագրամ

5 **Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 9000 000 է, ապա դրա անվանական մասշտաբը կլինի.**

1) 1 սմ-ում՝ 900 կմ
2) 1 սմ-ում՝ 9000 կմ
3) 1 սմ-ում՝ 9 կմ
4) 1 սմ-ում՝ 90 կմ

6 **Ի՞նչ է կոչվում ցամաքի որևէ կետի բարձրությունը՝ հաշվված ծովի մակարդակից.**

1) ծանծաղուտ
2) հարաբերական
3) միջին
4) բացարձակ

7 **Հրային (մագմային) ծագման ապար է.**

1) տորֆը
2) պեմզան
3) ավազը
4) մարմարը

8 **Ո՞ր դարաշրջանի ժամանակաշրջան են Տրիասը, Յուրան, Կավիճը։**

1) Պալեոզոյան
2) Մեզոզոյան
3) Պրոտերոզոյան
4) Արխեյան

9 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Ջուրը դանդաղ տաքանում է և դանդաղ սառչում։
2) Ցամաքը դանդաղ տաքանում է և արագ սառչում։
3) Ջուրը դանդաղ տաքանում է և արագ սառչում։
4) Ցամաքը արագ տաքանում է և դանդաղ սառչում։

10 **Մթնոլորտային ճնշումը կախված է.**

1) ամպամածությունից
2) քամու արագությունից
3) օդի ջերմաստիճանից
4) մթնոլորտային տեղումներից

11 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Գետի ծախսը հունի լայնակի կտրվածքով մեկ վայրկյանում անցած ջրի քանակն է։
2) Մորենային թմբերը գետի քայքայիչ աշխատանքի արդյունքում առաջացած մակերևույթի ձևերն են։
3) Հարթավայրերում մակերևույթի բնույթից կախված՝ շատ հստակ է արտահայտվում գետերի ջրբաժան գիծը։
4) Ի տարբերություն հարթավայրային գետերի՝ լեռնային գետերն ունեն փոքր թեքություն։

12 **«Լիճ — սնվող գետ» զույգերից ո՞րն է ճիշտ։**

1) Թանա — Նեղոս
2) Լադոգա — Ռոն
3) Նյասա — Կոնգո
4) Բայկալ — Լենա

13 **Բնութագրումով որոշել զոնան.**

Այս բնական զոնան տարածվում է մեծամասամբ հյուսիսային կիսագնդում և ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի և Եվրասիայի հյուսիսային շրջաններն ու նրանց հարող կղզիները: Կլիման մերձարկտիկական է: Ծառեր գրեթե չեն աճում, և տարածված են մամուռներն ու քարաքոսները: Ո՞ր բնական զոնան է.

1) սավաննա
2) տայգա
3) անապատ
4) տունդրա

14 **Տափաստանների բնական զոնային բնորոշ է.**

1) խոտային բուսականության գերակշռությունը
2) հողի բազմամյա սառածությունը
3) ճմապողզոլային հողերի գերակշռությունը
4) ամբողջ տարին կլիմայի չորությունը

15 **Ո՞ր կլիմայական գոտում կլիմայական մարզեր *չեն* առանձնացվում:**

1) արևադարձային
2) բարեխառն
3) մերձարևադադարձային
4) հասարակածային

16 **Որո՞նք են երիտասարդ լեռնաշղթաները:**

1) Տյան Շանի և Սայանների
2) Պիրենեյներ և Էլբուրս
3) Մեծ Զրբաժան և Դրակոնյան
4) Վերխոյանսկի և Չերսկու

17 **Ո՞ր նեղուցում գտնվող կղզիների միջև է անցնում ամսաթվի փոփոխման գիծը:**

1) Մոզամբիկի
2) Բոսֆորի
3) Ջիբլարթարի
4) Բերինգի

18 **Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ամենախոնավ մայրցամաքն է:
2) Ամենափոքր մայրցամաքն է:
3) Ամենաուշ հայտնագործված մայրցամաքն է:
4) Ամենահարավային մայրցամաքն է:

19 **Կղզիների ո՞ր զույգը նույն կղզեխմբին *չի* պատկանում.**

1) Սումատրա և Ճավա
2) Իռլանդիա և Իսլանդիա
3) Կուբա և Հայիթի
4) Հոնսյու և Հոկայդո

20 **Որո՞նք են Հարավային Ամերիկայի հարթավայրերը։**

1) Միսիսիպիի և Մերձատլանտյան
2) Օրինոկոյի և Գվիանական
3) Միջագետքի և Արաբական
4) Կոլումբիական և Լավրենտյան

21 **Ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Հարավային Ամերիկայի կլիմայի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի Ատլանտյան օվկիանոսը։
2) Հարավային Ամերիկայի հարավային մասն ընկած է բարեխառն գոտում։
3) Հարավային Ամերիկան ընկած է հարավային կիսագնդի բոլոր կլիմայական գոտիներում։
4) Հարավային Ամերիկան երկրագնդի ամենախոնավ մայրցամաքն է։

22 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Գորշ արջը և լուսանը տունդրային բնորոշ կենդանիներ են։
2) Կարիբու եղջերուն և բևեռային աղվեսը բարեխառն գոտու լայնատերև անտառների բնորոշ կենդանիներ են։
3) Պուման և մրջնակերը տիպիկ հյուսիսամերիկյան կենդանիներ են։
4) Բիզոնները հիմնականում ապրում են տայգայում։

23 **Աֆրիկայի միջերկրածովային կլիմայական մարզի գետերը հորդանում են.**

1) յուրաքանչյուր կիսագնդի ձմռանը
2) յուրաքանչյուր կիսագնդի աշնանը
3) յուրաքանչյուր կիսագնդի ամռանը
4) յուրաքանչյուր կիսագնդի գարնանը

24 **Ո՞ր գետը *չի* հոսում Աֆրիկայով։**

1) Հոենոս
2) Շարի
3) Զամբեզի
4) Կոնգո

25 **«Լեռնային համակարգ — լեռնագագաթ» զույգերից ընտրել *ճիշտը*.**

1) Բալկաններ — Կապուտջուղ
2) Ալպեր — Կոսցյուշկո
3) Ապալաչներ — Ակոնկագուա
4) Էլբուրս — Դեմավենդ

26 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Պիրենեյան թերակղզու կլիման չափավոր ցամաքային է։
2) Սումատրա և Կալիմանտան կղզիների կլիման մերձհասարակածային է։
3) Արաբական թերակղզու կլիման միջերկրածովային է։
4) Արևմտասիբիրական դաշտավայրի կլիման բարեխառն ցամաքային է։

27 **Պետական կառավարման ձևը, երբ պետական իշխանության ներկայացուցիչներին ընտրում է ժողովուրդը, իսկ պետության նախագահին՝ պատգամավորները, կոչվում է.**

1) սահմանադրական միապետություն
2) խորհրդարանական հանրապետություն
3) բացարձակ միապետություն
4) նախագահական հանրապետություն

28 **Ո՞ր շարքի բոլոր երկրներն ունեն դաշնային վարչատարածքային կառուցվածք։**

1) Իրան, Լեհաստան, Արգենտինա, Ֆրանսիա
2) Ճապոնիա, Շվեյցարիա, Նիգերիա, Եգիպտոս
3) Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Ավստրալիա
4) Կանադա, Բրազիլիա, Գերմանիա, Հնդկաստան

29 **Հայաստանի Հանրապետության քաղաքաաշխարհագրական դիրքի առանձնահատկություններից *չէ։***

1) սահմանակից բոլոր պետությունների հետ դիվանագիտական հարաբերություններ ունենալը
2) խոշոր պետությունների և ուժային կենտրոնների շահերի բախման ոլորտում լինելը
3) համաշխարհային նշանակության բաժանարար գծերի վրա լինելը
4) ռազմավարական գլխավոր դաշնակցի հետ անմիջական սահման չունենալը

30 **Ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Որոշ տարածքներում բնակչության մեծ խտությունը կարող է պայմանավորված լինել բնակչության բնական աճով և ներգաղթով։
2) Բարձրադիր լեռնային շրջաններն աչքի են ընկնում բնակչության խտության բարձր ցուցանիշով։
3) Հանքարդյունաբերության և էքստենսիվ գյուղատնտեսության տարածման շրջաններում բնակչության խտության ցուցանիշը ցածր է։
4) Քաղաքակրթության հնագույն օջախներն ավելի խիտ են բնակեցված։

31 **Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքի ամենաերիտասարդ ճյուղն է.**

1) գյուղատնտեսությունը
2) ծառայությունների ոլորտը
3) արդյունաբերությունը
4) տեղեկատվական ոլորտը

32 **Քարտեզ 1-ում Ե տառով ո՞ր պետությունն է նշված.**

1) Ուզբեկստան
2) Տաջիկստան
3) Թուրքմենստան
4) Ղազախստան



Քարտեզ 1

33 **Քարտեզ 1-ում Ա տառով ո՞ր ծովն է նշված.**

1) Ֆիլիպինյան
2) Դեղին
3) Արևելաչինական
4) Ճապոնական

34 **Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Նավթի հիմնական պաշարները տեղաբաշխված են Կուզբասի, Պեչորայի ավազաններում:
2) Քիմիական արդյունաբերությունը հենվում է բացառապես ներմուծվող հումքի վրա:
3) Բնական գազի պաշարներով գրավում է առաջին տեղը:
4) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:

35 **Ֆրանսիայի սահմանակից պետություն չէ.**

1) Բելգիա
2) Լիխտենշտայն
3) Գերմանիա
4) Լյուքսեմբուրգ

36 **Սկանդինավյան թերակղզու պետություններից է.**

1) Շվեդիա
2) Շվեյցարիա
3) Դանիա
4) Պորտուգալիա

37 **Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Թուրքիայի տնտեսության առաջատար ճյուղը նավթարդյունահանումն է:
2) Իրանը և Իրաքը փյունիկյան արմավի մշակությամբ աշխարհի առաջատար երկրներն են:
3) Լիբանանում զարգացման բարձր մակարդակի է հասել ֆինանսավարկային համակարգը:
4) Տարածաշրջանի տնտեսապես ամենազարգացած պետությունը Իսրայելն է:

38 **Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը:**

1. Մալի	ա. Լուանդա
2. Անգոլա	բ. Բամակո
3. Զամբիա	գ. Լուսակա
4. Տանզանիա	դ. Դոդոմա

1) 1-բ, 2-ա, 3-գ, 4- դ
2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
3) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

39 **Ո՞ր կղզեխումբն է Օվկիանիայում։**

1) Ֆոլկլենդյանը
2) Կուրիլյանը
3) Շպիցբերգենի
4) Պոլինեզիան

40 **Ո՞ր քաղաքում է տեղակայված Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կենտրոնական գրասենյակը։**

1) Նյու Յորք
2) Ֆիլադելֆիա
3) Բոստոն
4) Լոս Անջելես

41 **Լատինական Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Ներկայումս բնակչության կեսից ավելին ապրում են քաղաքներում։
2) Ամենախիտը բնակեցված է Ամազոնի դաշտավայրը։
3) Բնակչությունն աչքի է ընկնում խայտաբղետ ազգային ու ռասայական կազմով։
4) Քաղաքներում շատ են ֆավելաները։

42 **Ի՞նչը բնորոշ *չէ* Հայկական լեռնաշխարհին։**

1) վերընթաց գոտիականության լավ արտահայտվածությունը
2) բնական պայմանների մեղմությունը
3) երիտասարդ հրաբխականության ցայտուն արտահայտվածությունը
4) հարակից տարածքների նկատմամբ բարձր դիրքադրությունը

43 **Ընտրել գետերի այն զույգը, որոնք հոսում են արևմուտքից արևելք ուղղությամբ։**

1) Փամբակ և Զորագետ
2) Արգիճի և Արփա
3) Ախուրյան և Քասաղ
4) Դեբեդ և Աղստև

44 **«Լեռնաշղթա — լեռնանցք» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Վարդենիսի — Որոտանի
2) Վայքի — Վարդենյաց
3) Զանգեզուրի — Սևանի
4) Բազումի — Պուշկինի

45 **Ո՞ր քաղաքներն ունեն 20-50 հազար բնակչություն։**

1) Արմավիրը և Արտաշատը
2) Աշտարակը և Ջերմուկը
3) Վանաձորը և Հրազդանը
4) Նոյեմբերյանը և Բերդը

46 **ՀՀ գյուղական բնակավայրերի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Լեռնային մասնատված մակերևույթ ունեցող շրջաններում գյուղական բնակավայրերն իրարից հեռու են ու ցրված։
2) Արարատյան դաշտում գյուղական բնակավայրերն իրար շատ մոտ են, երբեմն՝ միաձուլված։
3) Բարձրալեռնային գյուղերից դեպի քաղաքներ և ցածրադիր բնակավայրեր կատարվող բնակչության ներգաղթ է դիտվել։
4) Խոշոր գյուղերի գերակշռող մասը Սյունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզերում է։

47 **Ո՞ր պնդումն է *սխալ.***

1) ՀՀ-ում սպասարկման ոլորտը նյութական արտադրության ոլորտից ավելի է զարգանում։
2) ՀՀ տրանսպորտի կառուցվածքում առկա են բոլոր ճյուղերն ու ենթաճյուղերը։
3) ՀՀ-ն ունի տնտեսության բարդ ու բազմաճյուղ կառուցվածք։
4) ՀՀ արդյունաբերության ճյուղային կառուցվածքում հաշվվում է տասից ավելի համալիր ու ճյուղ և հարյուրից ավելի ենթաճյուղ ու արտադրություն։

48 **ՀՀ-ում ոչ տեղական հումքի վրա հիմնված արտադրություն է.**

1) պղնձի
2) ալյումինի
3) ոսկու
4) մոլիբդենի



քարտեզ 2

49 **Քարտեզ 2-ում ո՞ր ջրամբարն է նշված Զ տառով:**

1) Ապարանի
2) Շամբի
3) Ախուրյանի
4) Կեչուտի

50 **Քարտեզ 2-ում ո՞ր քաղաքն է նշված Է տառով:**

1) Մարտունի
2) Սևան
3) Ճամբարակ
4) Գավառ

51 **Այն միջոցառումների համակարգը, որի գլխավոր խնդիրը բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումը, գնահատումն ու վերահսկումն է՝ ռացիոնալ բնօգտագործում և բնապահպանություն ապահովելու նպատակով, կոչվում է.**

1) էկոհամակարգ
2) աշխարհահամակարգ
3) կադաստր
4) մոնիթորինգ

52 **Բնական միջավայրի վրա մարդու բացասական ազդեցության օրինակ է.**

1) ջրի օգտագործման փակ ցիկլի ներդրումը
2) բաց եղանակով շինանյութերի արդյունահանումը
3) լանջերի դարավանդավորումը
4) անտառային շերտերի ստեղծումը

53 **Բուսական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում *չէ*.**

1) արոտաշրջանառության կազմակերպումը
2) անտառային հրդեհների դեմ պայքարը
3) կենսատեխնիկական միջոցառումների իրականացումը
4) հատուկ պահպանվող տարածքների առանձնացումը

54 **Բնության հատուկ պահպանվող տարածք *չէ*.**

1) արոտավայրը
2) արգելոցը
3) ազգային պարկը
4) արգելավայրը

55 **Ո՞ր պնդումն է *սխալ*:**

1) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:
2) Աշխարհի խոշոր արդյունաբերական շրջաններին բնորոշ են սմոգը, թթվային անձրևները, աղմկային աղտոտումը:
3) Էկոլոգիական լարվածությունը պատճառ է դառնում էկոլոգիական ագրեսիայի, որն արտահայտվում է թունավոր տեխնոլոգիաներն ու թափոններն այլ երկրներ տեղափոխելով:
4) Տեղային էկոլոգիական աղետները շրջակա միջավայրի համամոլորակային փոփոխությունների պատճառ դառնալ չեն կարող:

56 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են երկաթաքարի արդյունահանմամբ.**

1) Ավստրալիա
2) Մեքսիկա
3) Գերմանիա
4) Բրազիլիա
5) Թուրքիա
6) Արգենտինա
7) Ինդոնեզիա
8) Իտալիա

57 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են բամբակի արտադրությամբ.**

1) Իրան
2) Վրաստան
3) Կանադա
4) Ռուսաստան
5) Ֆրանսիա
6) Գերմանիա
7) Չինաստան
8) Պակիստան

58 **Գրել այն մշակաբույսերի համարները, որոնք տեխնիկական են.**

1) գարի
2) աշորա
3) ցորեն
4) բրինձ
5) բամբակենի
6) սուրճ
7) սոյա
8) եգիպտացորեն

59 **Գրել այն երկրների համարները, որտեղ արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում ատոմային էլեկտրակայաններին.**

1) Կանադա
2) Բրազիլիա
3) Ռուսաստան
4) Թուրքիա
5) Ճապոնիա
6) Չինաստան
7) Իրան
8) Ֆրանսիա

60 **Գրել ՀՀ-ում թվակազմանակով առաջին և երկրորդ տեղերը զբաղեցնող ազգային փոքրամասնությունների համարները.**

1) ասորիներ
2) եզդիներ
3) հույներ
4) ռուսներ
5) պարսիկներ
6) արաբներ
7) ուկրաինացիներ
8) վրացիներ

61 **Գրել ՀՀ ցեմենտի արտադրության կենտրոնների համարները.**

1) Երևան
2) Վաղարշապատ
3) Արտաշատ
4) Արարատ
5) Արթիկ
6) Գորիս
7) Գյումրի
8) Հրազդան

62 Տրված պետությունները դասավորել տարածքի մեծության նվազման կարգով:

1) Կանադա
2) ԱՄՆ
3) Չինաստան
4) Ռուսաստան

63 ՀՀ տրված գետերի համարները դասավորել դրանց թեքությունների աճման կարգով.

1) Ողջի 2) Մեծամոր 3) Հրազդան

(64 - 65) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, գագաթին՝ 520 մմ: Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18° է (հաշվարկ կատարել 5°-ով).

64 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

65 Որոշել օդի ջերմաստիճանը լեռան գագաթին:

66 Օդի բացարձակ խոնավությունը 12 գ/սմ³ է, իսկ հագեցման համար անհրաժեշտ խոնավությունը՝ 30 գ/սմ³: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

(67-68) Երկրի բնակչության թիվը 40 մլն. է, գյուղաբնակների բացարձակ թիվը՝ 16 մլն., իսկ տարածքի մակերեսը 200 հազ. կմ².

67 Որոշել բնակչության միջին խտությունը:

68 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

69 **Աշխարհի անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Ոչխարաբուծությունը զարգանում է հզոր համալիրներում, որոնք կառուցվում են բնակչության խիտ բնակեցված շրջաններում։
2) Շերամապահությամբ հնարավոր է զբաղվել այնտեղ, որտեղ աճում է թթենին։
3) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը։
4) Անասնապահության առաջատար ճյուղերն են ոչխարաբուծությունը և թռչնաբուծությունը։
5) Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է Հնդկաստանը, որին հաջորդում են Բրազիլիան, Չինաստանը և ԱՄՆ-ն։
6) Խոզերի գլխաքանակով աշխարհում առաջատար տեղ են գրավում Հյուսիսային Աֆրիկան և Հարավարևմտյան Ասիան։

70 **ՀՀ թեթև արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Կարի արդյունաբերությունը թեթև արդյունաբերության ենթաճյուղերից ամենացրված տեղաբաշխումն ուներ։
2) Մարալիկում կա բամբակամանվածքային ֆաբրիկա, որը մասնակիորեն է աշխատում։
3) Ճյուղի երիտասարդ ենթաճյուղերից է կոշկագործությունը։
4) Գորգագործությունը չունի արտահանման նշանակություն։
5) Գյումրին տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոն է։
6) Ճյուղն աշխատատար է։